## V

## ՓՈՔՐ ՄԱՏՈՒՌՆԵՐ ԵՒ ԽԱՉՔԱՐԵՐ

*Երկու Սուրբ Գրիգոր եկեղեցիների մէջ գտնւում է սրբատաշ քարից շինուած մի փոքր մատուռ՝ երկու խորաններից բաղկացած։ Այս խորաններից իւրաքանչիւրի երկարութիւնն է 2 արշին 11 վերշոկ. լայնութիւնը 1 արշին 13 վերշոկ. բարձրութիւնը 3 արշ. 14 վերշոկ։ Մատուռի վերայ կանգնեցրած է մի խաչքար. ներսի մէջը գերեզման կայ. մատուռի մօտ գերեզմանաքարեր կան, բայց սրանք նոր ժամանակների գործ են երեւում։*

*Երկրորդ սուրբ Գրիգոր տաճարի արեւելեան պատի տակ կան բազմաթիւ խաչքարեր և սրբատաշ քարերի կոյտեր, որոնց տակ մնացել է մի փոքր խորան՝ սրբատաշ քարից կառուցուած. այժմ խորանի պատերն են միայն կանգուն մնացել. ընկած կամարաձեւ քարը, որ ինչպէս երեւում է մուտքի ճակատի քարն է եղել, հետեւեալ արձանագրութիւնն է կրում.*

*«Ի թվ. ՈԾԷ*—657 *հայոց և* 1208 *փրկչական շինեցաք զեկեղեցիս Սերովբս, Միսաքս ի ձեռն... Մխիթարայ ի բարեխաւսութեան մեզ և ծնողած մերոց և ետուն ա աւր պատարագ ի տաւնի սրբոյ Սարգսի և թէ ոք խափանէ, դատի յԱստուծոյ»։*

*Այս արձանագրութեան թուականից երեւում է, որ մատուռները պէտք է շինուած լինին Գոշ Մխիթարի օրօք. և Կիրակոս Գանձակեցին յիշում է, որ Գոշը շինեց նաև մի քանի մատուռներ սբ. Հռիփսիմէի, Առաքելոց, սբ. Կարապետի անուններով* [1]։

*Սուրբ Աստուածածին տաճարի արեւելեան պատի տակ գտնւում են հին գերեզմանաքարեր. դրանցից մէկը դագաղի ձեւ ունի, մէկն էլ սալ քարից է և վրան արձանագրուած է.*

*«Պարոնութեան Արղութին և Խորիշ խաթունին ես Պետրոս վարդապետ կանգնեցի զխաչս բարեխաւս սուրբս մեզ և ծնողած մերոց. ի թուին ՉԳԴ»*—794 *հայոց ու* 1345 *փրկչական։*

[1]) «Շինեցին ի նորին Գնտեկ և'ս փոքրագոյն եկեղեցի մի յանուն սուրբ Կարապետին Յովհաննու ի գլուխ վանիցն։—էջ 128.։ «Շինեցին և այլ մատուրնս յանուն սրբոց առաքելոցն, և սրբոյն Հռիփսիմեայ».—էջ 126.։